ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ԼԱՅԱՐՈՒՅԺՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 13 - 14 (16816) ՇԱԲԱԹ 15 ՓԵՏՐՎԱՐԻ 2020Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԸՆԴԳԾՎԵՑ ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 13-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, Մյունխենի անվտանգության հարցով ավանդական՝ թվով 56-րդ համաժողովի աշխատանքին մասնակցելու համար, աշխատանքային այցով մեկնեց Գերմանիա: 40 պետությունների ղեկավարների եւ բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ:

Մյունխենի՝ 2020 թվականի անվտանգության համաժողովի շրջանակներում քննարկվելու են առկա ճգնաժամերի եւ անվտանգության մարտահրավերների, կլիմայի փոփոխության, միջազգային առեւտրի եւ տեխնոլոգիական առաջընթացի հետ կապված հարցերն ու դրանց լուծման ճանապարհները:

Երեկ՝ փետրվարի 14-ին, Մյունխենում Վրաստանի կառավարության ղեկավարը անցկացրեց մի շարք երկկողմ հանդիպումներ: Մասնավորապես, Գիորգի Գախարիան հանդիպում ունեցավ Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտպանության քարտուղար Մարկ Էսպերի հետ: Զրույցի ընթացքում ընդգծվեց ԱՄՆ-Վրաստան արդյունավետ երկկողմ համագործակցությունը եւ ԱՄՆ-ի կարեւոր աջակցությունը պաշտպանության բարեփոխման իրականացման ու անվտանգության գործում:

Նշվեց, որ ռազմավարական գործընկերության եւ անվտանգության ոլորտում համատեղ ջանքերի արդյունք է, որ գոյություն ունի անվտանգության համագործակցության շրջանակ, ինչպես նաեւ Վրաստանի պաշտպանության պատրաստակամության ծրագիր (GDRP), մարտական ուսումնական կենտրոն:

Վրաստանի վարչապետը Պենտագոնի ղեկավարին շնորհակալություն հայտնեց պաշտպանության ոլորտում Վրաստանին կարեւոր ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար եւ հայտարարեց, որ կառավարությունը կրկին ՆԱՏՕ-ի չափանիշներին հավատարիմ է. պաշտպանության ոլորտին կուղղվի ՀՆԱ-ի 2%-ը:

Կողմերը զրուցեցին Վրաստանի պաշտպանության ուժերի զարգացման 2020-2030 թվականների ծրագրերի մասին, որոնք ներառում են կոնկրետ քայլեր երկրի պաշտպանության հնարավորությունների երկարաժամկետ զարգացման համար:

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻ ՇԱՐՔ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Փետրվարի 14-ին իշխանությունների եւ ընդդիմության միջեւ երկխոսությունը վերսկսելու հարցով Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին անցկացրեց հանդիպումներ:

Վրաստանում Եվրամիության դեսպան Կառլ Հարցելի, Եվրախորհրդի դեսպան Կրիստիան Ուրսենի, ԱՄՆ դեսպան Քելլի Դեգնանի եւ Գերմանիայի դեսպանի պաշտոնակատար Միխայել Ֆաբրինիհետ: Հանդիպմանը, նախագահը քաղաքական երկխոսության եւ հաշտության գործընթացին ներգրավվելու կապակցությամբ, մեկ անգամ եւս հայտնել է իր պատրաստակամությունը:

Կողմերը տեղեկություններ են փոխանակել Վրաստանում ընթացող գործընթացների վերաբերյալ, եւ նախագահը վերահաստատել է քաղաքական երկխոսության ու հաշտության գործընթացներին ներգրավվելու իր պատրաստակամությունը:

Այդ հարցով հանդիպում անցկացրին նաեւ «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության գլխավոր քարտուղար Կախա Կալաձեն եւ կուսակցության գործադիր քար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ-ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆԴՀԱՏՎՈ՞ՒՄ ԵՆ...

Ինչպես արդեն հաղորդել ենք, 2019թ. նոյեմբերի 14-ին Վրաստանի խորհրդարանի կողմից 2020 թվականի խորհրդարանական ընտրությունները միայն համամասնական ընտրակարգով եւ զրոյական ընտրաշեմով անցկացնելու մասին սահմանադրական փոփոխության տապալումից հետո, միացյալ ընդդիմությունն սկսեց բողոքի ակցիաներ:

Վրաստանում հավատարմագրված եվրոպական երկրների դիվանագետների միջնորդությամբ, կառավարող «Վրացական երազանք» կուսակցության եւ միացյալ ընդդիմության ղեկավարների միջեւ անցկացվեցին հանդիպումներ՝ ընտրական օրենսգրքի փոխընդունելի տարբերակի մշակման նպատակով: Ի պատասխան միացյալ ընդդիմության կողմից առաջադրած ընտրական համակարգի այսպես կոչված «գերմանական մոդելի», «Վրացական երազանքը», դիմելով զիջումների, առաջադրեց 100/50 (100 մանդատը համամասնական, 50-ը՝ մեծամաս-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Փետրվարի 11-12-ը երկօրյա աշխատանքային այցով Վրաստանում էր գտնվում Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառույցների նախարար Սուրեն Պապիկյանը:

Այցի շրջանակներում, հայաստանյան հյուրի հետ հանդիպումներ ունեցան Վրաստանի փոխվարչապետ, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Մայա Ցքիտիշվիլին, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան:

Մայա Ցքիտիշվիլու եւ Սուրեն Պապիկյանի հանդիպմանը քննարկեցին երկու բարեկամ երկրների փոխգործակցության տարբեր ուղղություններին առնչվող արդիական հարցերի լայն շրջանակ: Մասնավորապես, կողմերն անդրադարձան վարչատարածքային բարեփոխումների բնագավառում ձեռնարկված միջոցառումների արդյունավետությանը, համայնքների միավորման եւ ապակենտրոնացման սանիտարա-հիգիենիկ ոլորտներում փորձի փոխանակման հնարավորություններին, որտեղ Վրաստանն ունի զգալի հաջողություն, ճանապարհային ենթակառույցների ոլորտում՝ Դեբեդ գետի վրա, Սադախլո-Բագրատաշեն անցակետի տարածքում նոր կամրջի կառուցման ծրագրի արդյունավետ իրականացմանը:

Հանդիպմանը կողմերը կարեւորեցին սահմանային Սադախլո-Բագրատաշեն անցակետի տարածքում՝ Դեբեդ գետի վրա նախատեսվող Բարեկամության կամրջ նախագծային աշխատանքներում երկկողմ ներգրավվածությունը ակտիվացնելու եւ նախագծի հաստատման գործընթացը արագացնելու անհրաժեշտությունն ու ծրագրի հաջողության պարագայում վերջինիս ռազմավարական կարեւոր նշանակությունը երկու երկրների եւ տարածաշրջանի տրանսպորտային հաղորդակցության համար:

Ջերմ ու անմիջական զրույցի ընթացքում, կողմերը կարեւորեցին, փոխվստահության մթնոլորտում առկա ներուժի առավել արդյունավետ օգտագործման միջոցով, հարաբերությունների շարունակական զարգացումն ու ընդլայնումը:

Նաթիա Թուրնավայի եւ Սուրեն Պապիկյանի՝ Վրաստանի էկոնոմիկայի նախարարությունում

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Փետրվարի 12-ին Վրաստանում Հայաստանի դեսպանությունը, Հայաստանի Զինված ուժերի կազմավորման տոնի առիթով, Թբիլիսիում կազմակերպել էր պաշտոնական ընդունելություն:

Ընդունելությանը ներկա էին Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառույցների նախարար Սուրեն Պապիկյանը, Վրաստանի պաշտպանության փոխնախարար Դավիթ Սուջաշվիլին, Վրաստանի Զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Վլադիմեր Չաչիբաիան, Վրաստանի արտաքին գործերի նախարարության պաշտոնյաներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական ու ռազմա-դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ, հոգեւոր դասի եւ վիրահայ համայնքային կառույցների մի շարք ներկայացուցիչներ:

Ողջույնի իր խոսքում Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանը նշեց, որ Հայաստանի անկախացման, պետականության կառուցման ու կայացման ամենակարեւոր դրվագներից մեկը հայկական բանակի ստեղծումն էր:

Վրաստանում Հայաստանի ռազմական կցորդ, գնդապետ Մեսրոպ Նազարյանն անդրադարձ կատարեց օրվա խորհրդին ու հայոց Զինուժի դերին ու նշանակությանը, ինչպես

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻ ՇԱՐՔ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տուղար Իրակլի Կոբախիձեն: Նրանք Ստրասբուրգում հանդիպում ունեցան Եվրախորհրդարանի անդամների հետ:

Հանդիպումներին քննարկվեցին Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարման, Վրաստանում ընթացող եւ ծրագրված բարեփոխումների, երկրում տիրող քաղաքական գործընթացների եւ նախընտրական իրավիճակին վերաբերվող հարցեր:

Ինչպես նշեց Կախա Կալաձեն, խորհրդարանականները բազմաթիվ հարցեր են տվել եւ ստացել համապատասխան բացատրություններ: Նրա խոսքով, խորհրդարանականները խոսել են նաեւ Գիգի Ուգուլավայի ձերբակալության մասին եւ տեղեկացրել, որ այդ գործը ոչ մի կապ չունի քաղաքականության հետ, դա վերաբերում է 48 միլիոն լարիի հափշտակությանը, եւ կան հիմնավոր ապա-

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

Փետրվարի 12-ին Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլին Բրյուսելում հանդիպում ունեցավ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Միրչեա Ջեանայի հետ:

Հանդիպումը կայացել է ՆԱՏՕ-ի պաշտպանության մինիստերիալի շրջանակներում, որին ներկա էր նաեւ Վրաստանի պաշտպանության գերատեսչության ղեկավարը: Հանդիպմանը Վրաստանի պաշտպանության նախարարը եւ ալյանսի գլխավոր քարտուղարի տեղակալը խոսեցին միջազգային խաղաղարարական գործողություններում վրաց զինծառայողների մասնակցության, երկկողմ համագործակցության խորացման հեռանկարների մասին: Վրացական կողմը կրկին ընդգծեց ՆԱՏՕ-ին ինտեգրվելու կուրսի անշեղությունն ու անդամակցության համար բարեփոխումների անցկացման պատրաստակամությունը:

Նշենք, որ մինիստերիալի վերջին օրը ՆԱՏՕ-ի Հյուսիսատլանտյան խորհուրդը հանդիպում է անցկացնում կայուն աջակցության գործընկեր եւ պոտենցիալ գործընկեր երկրների հետ:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նաեւ խոսեց Հայոց բանակի կազմավորման գործընթացի ու դրա անցած ուղու մասին:

Վրաստանի պաշտպանության փոխնախարար Դավիթ Սուջաշվիլին իր ելույթում ընդգծեց վրաց եւ հայ ժողովուրդների միջեւ պատմականորեն ձեւավորված փոխգործակցության կարեւորությունը՝ շեշտելով ռազմական համագործակցության զարգացման անհրաժեշտությունը ի շահ երկու երկրների եւ տարածաշրջանային անվտանգության:

Վրաստանում Հայաստանի դեսպան Ռուբեն Սադոյանն իր շնորհավորական խոսքում նշեց այն կարեւոր դերակատարությունը, որն իրականացնում են Հայաստանի Զինված ուժերը երկրի անվտանգության պահպանման եւ միջազգային համագործակցության շրջանակներում:



ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՈՒԿՐԱԻՆԱ ՊՈՒՏԻՆԻ ԵՎ ԶԵԼԵՆՍԿՈՒ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑԸ

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին հեռախոսազրույց է ունեցել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

Կողմերը քննարկել են 2019 թվականի դեկտեմբերի 9-ին Փարիզում կայացած «Նորմանդական գագաթաժողովի» ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարումը, ինչպես նաեւ «Նորմանդական քառյակի» ղեկավարների հաջորդ հանդիպման նախապատրաստումը:

Բացի այդ, երկու երկրների ղեկավարները քննարկել են Կիեւի, Ռուսաստանի եւ Դոնբասի միջեւ պահվող անձանց պլանավորվող փոխանակման հարցերը, ինչպես նաեւ հայտարարել են Դոնբասի հակամարտության կարգավորման շփման խմբի աշխատանքն ակտիվացնելու անհրաժեշտության մասին նախորդ պայմանավորվածություններն իրագործելու համար:

ԱԴՐԲԵՋԱՆ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 9-ին Ադրբեջանում անցկացվեցին արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Ընտրություններին մասնակցել է ձայնի իրավունք ունեցող քաղաքացիների 47,81 տոկոսը: Երկրի միապալատ խորհրդարանի 125 մանդատներին հավակնում էր 1314 թեկնածու: Ընտրությունների ընթացքին հետեւում էր 59 միջազգային կազմակերպություն ներկայացնող 883 դիտորդ:

Ադրբեջանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տարածած տեղեկատվության համաձայն, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալեւի գլխավորած «Ենի Ազերբայջան» կառավարող կուսակցությունը ստացել է 71 մանդատ:

Ընտրությունները խստորեն քննադատվել են ԵԱՀԿ դիտորդների կողմից: ԵԱՀԿ ժողովրդավարական ինստիտուտների եւ մարդու իրավունքների բյուրոյից դիտորդական առաքելության ներկայացուցիչների եզրակացությամբ, արտահերթ ընտրություններում չի եղել իսկական մրցակցություն, չնայած մեծ թվով թեկնածուների առկայությանը: Դիտորդները արձանագրել են բազմաթիվ խախտումներ:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կայացած հանդիպման օրակարգում հարեւան երկու երկրների միջեւ առկա էներգետիկ համագործակցության շրջանակում ընթացիկ ծրագրերի իրականացմանն առնչվող հարցերն էին: Արձանագրվեցին վերջին ձեռքբերումները Հայաստան-Վրաստան բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի եւ Հայաստանի Դդմաշենի ենթակայանի կառուցման ծրագրի իրականացման ուղղությամբ: Նշվեց, որ էլեկտրահաղորդման գծի կառուցումը կարեւորվում է նաեւ Հյուսիս-Հարավ էներգետիկ միջանցքին նոր թափ հաղորդելու տեսանկյունից:

- Այս երկու խոշոր նախագծերով Հայաստանն ու Վրաստանը կարող են առաջընթաց գրանցել նաեւ այլընտրանքային էներգետիկայի ոլորտում, ձեռք բերել նոր շուկաների հասանելիություն: Արդյունքում, մենք կարող ենք էներգետիկ կարեւոր միջանցք դառնալ դեպի Պարսից ծոցի երկրներ եւ Վրաստանի միջոցով արդեն երրորդ երկրներ,- նշեց Սուրեն Պապիկյանը:

Նաթիա Թուրնավան, իր հերթին, կարեւորեց Հյուսիս-Հարավ էներգետիկ միջանցքի քառակողմ ձեւաչափով համագործակցության ընդլայնման անհրաժեշտությունը՝ ընդգծելով Հայաստանի եւ Վրաստանի տարանցիկ միջանցքի գործառույթները նման կարեւորություն ունեցող էներգետիկ նախաձեռնության մեջ: Նրա խոսքով, վրացական կողմը պատրաստ է քայլեր ձեռնարկել Հայաստան-Վրաստան բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի կառուցման աշխատանքները զուգահեռ իրականացնելու ուղղությամբ:

Զրուցակիցներն անդրադարձան նաեւ էներգետիկ անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ համատեղ քայլերին, մասնավորապես՝ Վրաստանի տարածքով Հայաստան մատակարարվող գազատարի վրացական կողմում գտնվող հատվածի տեխնիկական վիճակի բարելավմանն ուղղված աշխատանքներին: Հարցի կարգավորման ուղղությամբ, կողմերը պատրաստակամություն են հայտնել նախաձեռնել հանգամանալից քննարկում շահագրգիռ կառույցների մասնակցությամբ:

Հանդիպմանը քննարկվեցին նաեւ տրանսպորտային հաղորդակցությանն առնչվող հարցեր՝ ուղղված ինչպես երկաթուղային այլընտրանքի, այնպես էլ՝ սեւծովյան նավահանգստում լաստանավերի ձեռքբերման հնարավորություններին:

Նշենք, որ փետրվարի 12-ին Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառույցների նախարար Սուրեն Պապիկյանը, Վրաստանում Հայաստանի դեսպան Ռուբեն Սադոյանի հետ հանդիպում ունեցավ Վերին Լարս տանող ճանապարհի փակ լինելու պատճառով Մեծ Լիլոյում կուտակված բեռնատարների հայաստանյան վարորդների հետ: Վարորդներին հուզող հիմնական խնդիրը, ճանապարհից զատ, մոտակայքում մթերային խանութի բացակայության հարցն էր, որի լուծման համար դեսպանը խոստացավ. ամեն օր դեսպանության մեքենան կոնկրետ ժամին կլինի նրանց տրամադրության տակ, որպեսզի վարորդները կարողանան գնել իրենց անհրաժեշտ ապրանքները:

Այցի շրջանակներում, Հայաստանի տարածքային կառավարման եւ ենթակառույցների նախարար Սուրեն Պապիկյանը եղավ Թբիլիսիի Հայ Առաքելական առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եկեղեցում, «Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում, Հայ գրողների եւ հասարակական գործիչների «Խոջիվանքի» պանթեոնում եւ «Գարրի Դավթյան» մշակույթի տանը:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԻՐԱՎԱԿԱՆ

ԹԲԻԼԻՍԻԻ ՆԱԽԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ՍԱՀՄԱՆՎԵՑ ԵՐԵՔ ՏԱՐՎԱ ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ

Վրաստանի Գերագույն դատարանը «Եվրոպական Վրաստան» կուսակցության առաջնորդներից մեկին՝ Գիգի Ուգուլավային, մեղավոր ճանաչեց Թբիլիսիի զարգացման հիմնադրամի գործով եւ դատապարտեց երեք տարի ու երկու ամիս ժամկետով ազատազրկման:

Նշենք, որ դատարանը որոշել էր նրան դատապարտել 9 տարով ազատազրկման, սակայն, հաշվի առնելով համաներման մասին օրենքը եւ այն փաստը, որ Գիգի Ուգուլավան այլ գործով արդեն պատիժ էր կրել երեք տարով, նա այժմ դատապարտվում է երեք տարի երկու ամիս ժամկետով ազատազրկման:

Հիմնադրամի գործով պետական մեղադրողը Գիգի Ուգուլավային մեղադրում էր Թբիլիսիի զարգացման հիմնադրամից 48 միլիոն լարի յուրացման մեջ: Դատախազության տվյալներով, այդ գումարը 2011-2012 թվականներին ծախսվել է այդ ժամանակ կառավարող «Ազգային միասնական շարժում» կուսակցության համակարգողներին ֆինանսավորելու համար: Այն ժամանակ Ուգուլավան կուսակցության անդամ էր:

Փետրվարի 10-ին Ուգուլավայի ձերբակալման կադրերն ուղիղ եթերով ցուցադրել է Վրաստանի «Ռուսթավի 2» հեռուստաընկերությունը: Գիգի Ուգուլավային արդեն տեղափոխել են N9 պատժակատարողական հիմնարկ՝ այսպես կոչված Մատրոսովի բանտ: Ուգուլավային բանտ են տեղափոխել ներքին գործերի նախարարությունից, ուր նա անձամբ էր ներկայացել:

Հիշեցնենք, որ Գիգի Ուգուլավան մեղադրվում էր Թբիլիսիի զարգացման հիմնադրամից 48 միլիոն լարիի յուրացման մեջ: Նշված գործով Թբիլիսիի քաղաքային դատարանը 2018 թվականի փետրվարի 28-ին Ուգուլավային դատապարտել էր մեկ տարի երեք ամսով ազատազրկման, սակայն այդ պատիժը միացվել էր մեկ այլ պատժի հետ: Որոշումը վերին ատյանում բողոքարկել էր դատախազությունը:

Ընդդիմությունն արդեն դատավճիռը որակել է քաղաքական եւ հայտարարել ընտրական բարեկարգման շուրջ իշխանության հետ բանակցությունների դադարեցման մասին, ինչպես նաեւ սպառնացել է բողոքի ընդգրկուն ակցիաներով:



ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԹԻՎԸ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ Է

Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության լրատվությամբ, 2020 թվականի հունվարին Վրաստան միջազգային ճանապարհորդների այցերը գերազանցել են 633 հազարը եւ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել 19,8 տոկոսով: Ինչ վերաբերում է անմիջական զբոսաշրջային այցերին, ապա նախարարության տվյալներով աճը կազմել է 18,9 տոկոս:

Գերատեսչության լրատվությամբ, ավելացել է Եվրամիության անդամ երկրներից միջազգային ճանապարհորդների թիվը: Հունվարին մեծ աճ է գրանցվել Իտալիայից՝ 133,1, Լեհաստանից՝ 82,9, Ֆրանսիայից՝ 46,8 եւ Լիտվայից՝ 43,7 տոկոս:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Դադարեցված շինարարությունների գործունեության վերսկսման ժամկետները կրկին երկարաձգվեց: Շինարարական ընկերություններին հնարավորություն ընձեռվեց մինչեւ 2026 թվականը վերսկսել շինարարական գործընթացը, վերջնականապես կառուցել կիսատ թողած գործընթացն ու բնակարանները հանձնել սեփականատերերին: Նման հազարավոր քաղաքացիներ երկար տարիներ սպասում են իրենց պատկանող բնակարանների օրինականացմանը: Շինարարությունը վերսկսված ընկերություններին որոշ վճարների արտոնություններ կտրվի:

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ Է ՄԵԿ ՄԻԼԻՈՆԻՑ ԱՎԵԼԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱ

2020 թվականի հունվարի 31-ի դրությամբ, Վրաստանում «ակտիվ» կարգավիճակով 1 038 730 տրանսպորտային միջոց է գրանցված: Այս մասին տեղեկացնում է ներքին գործերի նախարարությունը:

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, Վրաստանում գրանցված էր 1 027 074 տրանսպորտային միջոց, ինչը 11 656-ով պակաս է 2020 թվականի հունվարի 31-ի տվյալներից:

ՆՈՐԱԾՆԻ ՎԱՃԱՌՔԻ ՓԱՍՏՈՎ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ ՄԱՅՐԸ ԵՎ ԵՎՍ ՅՈԹ ՀՈԳԻ

Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայության աշխատակիցները անչափահասների թրաֆիկինգի փաստով ձերբակալել են 7 մարդու:

Գերատեսչության կողմից տարածված հաղորդագրության մեջ նշված է, որ ձերբակալել են հանցավոր խմբի բոլոր անդամներին, ձերբակալվածների թվում են նաեւ երեխայի մայրն ու երկու բժիշկ: Նորածնին ժամանակավորապես փոխանցել են պետական խնամքի եւ թրաֆիկինգի զոհերի տուժածների օգնության գործակալությանը: Ձերբակալվածներից մեկը վերջին տարիներին դատապարտված է եղել նման հանցագործության համար:

Քննությամբ պարզվել է, որ ձերբակալվածները, անձնական նյութական օգուտ ձեռք բերելու նպատակով, մտադիր են եղել վաճառել նորածնին եւ բաժանել ստացված հասույթը:

Հանցագործները, այդ հանցանքը կատարելու մտադրությամբ, գտել են այն մարդուն, որը երեխայի համար պատրաստ էր վճարել 13 հազար դոլար:

Հանցագործությունը թաքցնելու նպատակով, նախնական համաձայնությամբ, երեխայի մայրը, հղիության ընթացքում եւ ծննդաբերության ժամանակ հիվանդանոցում գրանցվել է այլ ազգանվան տակ:

Հետաքննությունն ընթանում է Վրաստանի քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածի երրորդ մասով, որը նախատեսում է 14-17 տարվա ազատազրկում:

Փետրվարի 12-ին Թբիլիսիի քաղաքային դատարանը այդ գործով ձերբակալված բոլոր անձանց գրավի դիմաց ազատ արձակեց:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՌՈՒՍԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻՆ ԴԻՄԱԿԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱՄՆ՝ 2021 թվականի բյուջեն ռազմական օգնության տեսքով, Եվրոպայի եւ Եվրասիայի երկրներին, այդ թվում՝ Վրաստանին ենթադրում է 170 միլիոն դոլարի հատկացում: Այս մասին նշված է ԱՄՆ 2021 թվականի ֆիսկալ տարվա բյուջեի օրինագծում:

Փաստաթղթում ասվում է, որ Եվրոպայում եւ Եվրասիայում ռազմավարական անվտանգության առաջնահերթությունները Ռուսաստանի ազդեցության ու ագրեսիայի դեմ բախվելն է, դաշնակիցների եւ գործընկերների հնարավորությունների հզորացմամբ, որպեսզի պաշտպանեն ինքնիշխանությունն ու ապահովեն ինքնապաշտպանությունը ՆԱՏՕ-ի եւ Արեւմուտքի այլ ուժերի հետ փոխադարձ համագործակցության բարելավման ճանապարհով, ինչպես նաեւ կայուն պաշտպանության բարեփոխումների իրականացման շնորհիվ:

Փաստաթղթի համաձայն, ֆինանսավորումը կնպաստի հագեցվածության մատակարարմանը եւ զորավարժություններին, այդ թվում՝ տակտիկ հագեցվածության ստանալուն հետախուզության եւ զննության համար:

ԱՄՆ՝ 2021 թվականի բյուջեի օրինագծում ֆինանսավորում են ստանալու Վրաստանը, Ուկրաինան, Էստոնիան, Լիտվան, Լատվիան, որոնք հիշատակված են որպես ճակատի առաջնագծի երկրներ:

Վրաստանը 2021 թվականին ԱՄՆ-ից եւս մի քանի միլիոն դոլար կստանա տնտեսության զարգացման համար:

ԱՌԱՋԱՆԳ

ԱՎԵԼԱՆՈՒՄ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ՄԱՀԱՑԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ, ԹԵՊԵՏ ՇԱՏԱՆՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ԲՈՒԺՎԱԾՆԵՐԸ

Փետրվարի 10-ին Վրաստանի այն քաղաքացիները, որոնք կորոնավիրուսի տարածման պատճառով հայտարարված կարանտինի պայմաններում չէին կարողանում դուրս գալ չինական Յանգջոու քաղաքից, արդեն Թբիլիսիում են Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարի հանձնարարությամբ, նրանք Վրաստան են բերվել Վրաստանի օդանավակայանների միության ջանքերով:

Դեռեւս անցյալ տարվա դեկտեմբերին Չինաստանի Հուբեյ նահանգում տարածված նոր տիպի կորոնավիրուսով (2019-nCoV) վարակման արդյունքում փետվարի 14-ի դրությամբ մահացածների թիվը հասնում է 1486-ի, իսկ վարակվածներինը՝ 64429-ի: Նշենք, որ հիվանդությունից մահացածների շուրջ երեք քառորդը հենց Հյուբեի նահանգից է: Վերոնշյալին զուգընթաց՝ հուսադրիչ տեղեկատվություն էլ է ներկայացվել: Այսպես, Չինաստանի առողջապահության պետական կոմիտեի տեղեկատվությամբ, Չինաստանում նոր տիպի կորոնավիրուսի հարուցած թոքաբորբից ապաքինվածների բաժինն արդեն հասել է 8,2 տոկոսի, ինչը վկայում է այն մասին, որ բուժումն սկսում է արդյունքներ տալ: Տեղեկատվության մեջ նշված է, որ Չինաստանի մասշտաբով բուժվել է ավելի քան 7 հազար մարդ, բոլոր վարակվածների 8,2 տոկոսը:

Փետրվարի 10-ին Վրաստանում Չինաստանի դեսպան Լի Յանը հատուկ հրավիրված մամլո ասուլիում հայտարարեց, որ Չինաստանի եւ Վրաստանի միջեւ սերտ հաղորդակցության եւ համագործակցության միջոցով հնարավոր է կանխել եւ վերահսկել համաճարակը:

Ինչպես նշել է Չինաստանի դեսպանը, Վրաստանը որոշակի ժամանակավոր միջոցներ է ձեռնարկել կանխելու համաճարակի տարածումը, այդ թվում՝ ուղիղ թռիչքների եւ Չնաստանից կենդանիների ներմուծման արգելքը: Դեսպանի խոսքով, Վրաստանը անհանգստության պատճառ չունի:

- Համաճարակի զարգացման ֆոնին, վրացական կողմն ընդունել է մի շարք կանխարգելիչ միջոցներ, ինչպիսիք են օդանավակայաններում մարմնի ջերմաստիճանի մոնիթորինգը եւ այլն: Հույս ենք հայտնում, որ Չինաստանի եւ Վրաստանի միջեւ սերտ հաղորդակցության եւ համագործակցության միջոցով, մենք կկարողանանք կանխել եւ վերահսկել համաճարակը,- հայտարարեց դեսպանը:

Նրա խոսքով, համաճարակն արդեն իսկ որոշակի բացասական ազդեցություն է ունեցել Չինաստանի եւ Վրաստանի միջեւ երթեւեկության, այցերի եւ ներմուծման-արտահանման վրա եւ կարող է ազդել ընթացիկ լայնածավալ տրանսպորտային ենթակառուցվածքային նախագծերի տեմպերի վրա:

- Մենք եւս մեկ անգամ կոչ ենք անում վրացական կողմին ուշադիր ուսումնասիրել արդեն իսկ ձեռնարկված ժամանակավոր սահմանափակիչ միջոցները, նվազագույնի հասցնել վնասը, որը կարող է առաջանալ Չինաստանի եւ Վրաստանի համագործակցության մեջ տարբեր ոլորտներում,- նշեց դեսպանը:

Ըստ նրա, Չինաստանը կշարունակի սերտ հաղորդակցությունը Վրաստանի դեսպանատան հետ եւ ակտիվորեն կօգնի Չինաստանում Վրաստանի քաղաքացիներին:

Հիշեցնենք, Վրաստանում կորոնավիրուսի հնարավոր տարածման կանխարգելման նպատակով, հունվարի 29-ից արգելվել են ուղիղ չվերթերը Չինաստանից:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՀԻՊՈԿՐԱՏԻ ԵՐԴՄԱՆԸ ՀԱՎԱՏԱՐԻՄ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ՝ ՀՐԱՇՔ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

Ինչպես հաղորդում է Վրաստանի ՆԳ մամլո ծառայությունը, փետրվարի 7-ին Ախալքալաքիում գումբուրդոցիների հարսանիքին, մի խումբ երիտասարդների վեճը վերածվեց դանակահարության: Արդյունքում, 21, 23 եւ 26 տարեկան տղաները սրտի եւ որովայնի շրջանում դանակով հասցված վնասվածքներով տեղափոխեցին Ախալքալաքիի հիվանդանոց, որտեղ տեղի վիրաբույժները արտակարգ իրավիճակում, գրեթե 10 ժամ տեւած վիրահատություններից հետո, կարողացան փրկել նրանց կյանքը:

Ախալքալաքիի հիվանդանոցի բժիշկները, որոնց մեջ չկան սրտաբան վիրաբույժներ, արագ կողմնորոշվեցին. ակնհայտ էր, որ տուժածներին Թբիլիսի ողջ հասցնելու հավանականությունը քիչ էր՝ ելնելով ձմեռային ճանապարհների վտանգավոր լինելուց, եւ պետք էր տեղում դիմել կտրուկ միջոցների: Հատուկ սիրտանոթային բաժանմունքի, ինչպես նաեւ մասնագետ սրտաբան վիրաբույժների բացակայության պայմաններում, քաղաքային հիվանդանոցի վիրաբույժներ Գիա Եփրիկյանը, Ռաֆայել Զարչյանը եւ Սուրեն Կարապետյանը, անաստազիոլոգներ Անահիտ Ապոզյանն ու Սամվել Ազալազյանը հանձն առան միաժամանակ կատարել սրտի երկու ծայրաստիճան բարդ, բաց վիրահատություն: Նրանք հաջողությամբ կատարեցին վիրահատությունները: Երիտասարդներից մեկի վիրահատության ընթացքում, բժիշկները կանխեցին սրտի կանգը, իրականացրին բաց մերսում՝ վերականգնելով սրտի աշխատանքը: Բացի սրտի վնասվածքներից, տուժածների մոտ հայտնաբերվել էին նաեւ ստամոքսի, աղիքների եւ լյարդի վնասվածքներ: Վիրավորներից մեկի մոտ իրականացվեց նաեւ լյարդի վիրահատություն:

Վիրահատվածներից երկուսն արդեն գտնվում են Թբիլիսիում, մեկը շարունակում է մնալ Ախալքալաքիի հիվանդանոցում, երեքի վիճակն էլ բժիշկները գնահատում են կայուն:

Մեզ հետ հեռախոսազրույցում «Զապիձե» սրտաբանական կլինիկայի դիտորդական խորհրդի նախագահ, Վրաստանի առողջապահության նախկին նախարար (1998-2004թթ.) Ավթանդիլ Ջորբենաձեն բարձր գնահատական տվեց ախալքալաքցի վիրաբույժների կատարած գործին:

- Սրտաբանական բաժանմունքի, սրտաբան մասնագետների բացակայության պայմաններում նման վիրահատություն կատարելը, իրոք սխրանք է,- ասաց Ա.Ջորբենաձեն:- Թեեւ, որքանով հիշում եմ, այդ հիվանդանոցը նման սխրանքով հայտնի դարձավ նաեւ 2017 թվականին, երբ նույն պայմաններում սրտի բաց վիրահատություն կատարեց հիվանդանոցի գլխավոր բժիշկ Ալեքսան Թորոյանը: Վերջին դեպքը կրկին անգամ փաստեց շրջանում գործող տվյալ հիվանդանոցի բժիշկների անմնացորդ նվիրումն ու գերարհեստավարժությունը:

Համոզված եմ՝ ժամանակն է այդ հիվանդանոցը զինել համապատասխան, այդ թվում՝ սրտաբանական վիրահատությունների համար անհրաժեշտ սարքավորումներով:

Ավելացնենք, որ Ախալքալաքիից եւ Նինոծմինդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը, Ախալքալաքիի քաղաքապետ Յուրի Ունանյանը այցելեցին Ախալքալաքիի քաղաքային հիվանդանոց, հանդիպեցին հրաշք-վիրահատությունները կատարած բուժանձնակազմի, ինչպես նաեւ վիրահատված երիտասարդի հետ: Նրանք բժիշկներին շնորհակալություն հայտնեց արհեստավարժին վայել բարձր մակարդակով վիրահատության, քաղաքացիական եւ մասնագիտական պարտքի խոր գիտակցման համար:

Վրաստանի ՆԳ նախարարության հաղորդագրությամբ, Ախալքալաքիի ոստիկանության շրջանային վարչության աշխատակիցների անցկացրած օպերատիվ-հետախուզական եւ հետաքննչական գործողությունների արդյունքում, ձերբակալվել է երկու հոգի՝ 1991 թվականին ծնված Ս.Ս.-ն եւ 1991 թվականին ծնված Ս.Ս.-ն՝ երկու կամ ավելի անձին ծանր վնասվածքներ հասցնելու եւ կանխամտածված սպանության փորձի մեղադրանքով:

Հետաքննությունը պարզել է, որ մեղադրյալները անձնական հողի վրա, օգտագործելով սառը զենք, մարմնական բազմաթիվ վնասվածքներ են հասցրել 1990 թվականին ծնված Ա.Ա.-ին, 1996 թվականին ծնված Մ.Ք-ին, 1998 թվականին ծնված Ս.Ա.-ին եւ 1992 թվականին ծնված Ռուսաստանի քաղաքացի Ա.Ա.-ին:

Հանցագործությունը ենթադրում է 16-20 տարվա կամ ցմահ ազատազրկում:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ-ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆԴՀԱՏՎՈ՞ՒՄ ԵՆ...

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նական) տարբերակը: Չորրորդ հանդիպմանը՝ որպես պատասխան առաջադրած այդ տաբերակին, միացյալ ընդդիմությունը ներկայացրեց մեկ այլ՝ 130/20 տարբերակ, թեպետ այս վերջին նախագծի առաջադրումը Թբիլիսիի զարգացման հիմնադրամի գործով Թբիլիսիի նախկին քաղաքապետ, «Եվրոպական Վրաստան» կուսակցության ղեկավարներից մեկի՝ Գիգի Ուգուլավայի փետրվարի 10-ին ձերբակալությունից հետո, միացյալ ընդդիմությունը հայտարարեց կառավարող կուսակցության հետ բանակցությունները ընդհատելու մտադրության մասին եւ անցնում են համընդհանուր անհնազանդության մեծ ալիքի նախապատրաստմանը:

«Վրացական երազանքի» խորհրդարանական մեծամասնության ղեկավար Մամուկա Մդինարաձեն ընդդիմախոսներին կոչ արեց համատեղ փոխընդունելի տարբերակի մշակման համար վերադառնալ բանակցությունների սեղան:

Հիշեցնենք, որ եթե մինչեւ փետրվարի վերջը ընտրական օրենսգրքի հաշվով համաձայնության չլինի, ապա, հաշվի առնելով ժամանակի սղությունը, 2020 թվականի խորհրդարանական ընտրությունները կանցկացվեն խառը՝ համամասնական եւ մեծամասնական, նախկինում հաստատված ընտրակարգով:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Թբիլիսիում կայացավ Վրաստանի եւ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիաների ղեկավարների հանդիպումը:

Հանդիպմանը, որտեղ վրացական կողմը ներկայացնում էին Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Լեւան Կոբիաշվիլին, ֆեդերացիայի առաջին փոխնախագահ Կախա Չումբուրիձեն, կազմակերպության փոխնախագահներ Ալեքսանդր Իաշվիլին, Ակակի Ալադաշվիլին եւ ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Դավիթ Մուջիրին, իսկ հայկական կողմը՝ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանը, ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Արթուր Ազարյանը, ֆեդերացիայի դեսպան Խորեն Հովհաննիսյանը եւ կազմակերպության գործկոմի անդամ Կարեն Շաբոյանը, քննարկվեցին Վրաստանի եւ Հայաստանի ֆեդերացիաների միջեւ համագործակցության զարգացման հետագա հեռանկարներն ու փոխհարաբերությունների սերտացման հնարավորությունները: Մասնավորապես, պայմանավորվածություն է ձեռք բերվել մրցավարական խնդիրների համատեղ քննարկման եւ ներքին մրցաշարերի հանդիպումների սպասարկման համար մրցավարների փոխանակման վերաբերյալ: Հանդիպման ընթացքում կողմերը պայմանավորվել են ձեւավորել նաեւ միասնական հատուկ համակարգ, որի շրջանակներում երկու երկրների տղամարդկանց (Մ-14-ից մինչեւ Մ-21) եւ կանանց տարբեր տարիքային հավաքականները կանցկացնեն ընկերական հանդիպումներ: